

ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՆՅՈՒԹ ARMENIAN

Մենինգոկոկային ACWY պատվաստանյութեր – MenACWY և MPSV4. Ինչ է անհրաժեշտ Ձեզ իմանալ

Many Vaccine Information Statements are available in Armenian and other languages. See www.immunize.org/vis
Պատվաստանյութի վերաբերյալ շատ տեղեկատվական նյութեր հասանելի են հայերենով և այլ լեզուներով: Տե՛ս www.immunize.org/vis կայքը

1 Ինչու՞ պատվաստվել:

Մենինգոկոկային հիվանդությունը լուրջ հիվանդություն է, որն առաջանում է մի տեսակ մանրէից, որը կոչվում է *Neisseria meningitidis*: Այն կարող է հանգեցնել մենինգիտի (գլխուղեղի և ողնաշարի թաղանթի վարակ) և արյան վարակների: Մենինգոկոկային հիվանդությունը հաճախ առաջանում է առանց նախագոյացման, նույնիսկ մարդկանց շրջանում, ովքեր լիովին առողջ են:

Մենինգոկոկային հիվանդությունը կարող է տարածվել անձից անձ՝ մոտ շփման միջոցով (հագոցի կամ համբուրվելու միջոցով) կամ երկար շփման արդյունքում՝ հատկապես երիտասարդ մարդկանց շրջանում, ովքեր ապրում են միևնույն ընտանիքում:

Նվազագույնը 12 տեսակի *N. մենինգիտի* գոյություն ունի, որոնք կոչվում են «սերոլոգիական խմբեր»: A, B, C, W, և Y սերոլոգիական խմբերը ամենից շատն են հարուցում մենինգոկոկային հիվանդությունը:

Ցանկացած անձ կարող է ստանալ մենինգոկոկային հիվանդություն, սակայն որոշ մարդիկ առավել վտանգված են վարակվելու, ներառյալ.

- Մեկ տարեկանից ցածր երեխաները
- 16-ից մինչև 23 տարեկան դեռահասները և մեծահասակները
- Որոշակի բժշկական վիճակ ունեցող մարդիկ, որն ազդում է իմունային համակարգի վրա
- Միկրոկենսաբանները, որոնք մշտապես աշխատում են *N. մենինգիտի* մեկուսիչների հետ
- Մարդիկ, որոնք վտանգված են իրենց համայնքում տարածված համաճարակի պատճառով:

Նույնիսկ, երբ այն բուժվում է, մենինգոկոկային հիվանդությունը սպանում է 100 վարակված մարդկանցից 10-ից մինչև 15-ին: Յուրաքանչյուր 100 վարակված անձանցից մոտավորապես 10-ից 20-ը, ովքեր գոյատևել են, կտառապեն լսողության կորստով, ուղեղի վնասվածքով, երկվամի վնասվածքով, անդամահատումով, ջղային համակարգի խնդիրներով, կամ մաշկային պատվաստման սպիներով:

Մենինգոկոկային ACWY պատվաստանյութերը կարող են օգնել կանխելու մենինգոկոկային հիվանդությունը, որն առաջանում է A, C, W, և Y սերոլոգիական խմբերի կողմից: Նաև հասանելի է սերոլոգիական B խմբի դեմ պայքարող մեկ այլ պատվաստանյութ:

2 Մենինգոկոկալ ACWY Պատվաստանյութեր

Կան երկու տեսակի մենինգոկոկալ պատվաստանյութեր, որոնք հավատարմագրված են Food and Drug Administration-ի (FDA) (Մեդիկ և դեղորայքի վարչություն) կողմից, որոնք պաշտպանվում են A, C, W, և Y սերոլոգիական խմբերի կողմից. մենինգոկոկալի կապակցված պատվաստանյութը (**MenACWY**) և մենինգոկոկալ պոլիսախարիդի պատվաստանյութը (**MPSV4**):

MenACWY-ի երկու դեղաչափեր սովորաբար խորհուրդ է տրվում 11-ից մինչև 18 տարեկան դեռահասներին. առաջին դեղաչափը՝ 11-ից մինչև 12 տարեկաններին, խթանիչ դեղաչափը՝ 16 տարեկաններին: Որոշ դեռահասներ, ներառյալ HIV-ով տառապող դեռահասները, պետք է ստանան լրացուցիչ դեղաչափեր: Ձեր առողջապահական խնամք ապահովողից խնդրեք լրացուցիչ տեղեկատվություն:

Ի հավելում դեռահասներին տրվող մշտական պատվաստանյութին, MenACWY պատվաստանյութը նաև խորհուրդ է տրվում որոշակի խմբի մարդկանց.

- A, C, W, կամ Y սերոլոգիական խմբի մենինգոկոկային համաճարակի վտանգի տակ գտնվող մարդիկ
- Ցանկացած անձ, ով ունի վնասված կամ հեռացված փայծաղ
- Ցանկացած անձ, ով տառապում է իմունային համակարգի հազվագյուտ վիճակով, որը կոչվում է «հավելյալ բաղադրիչի մշտական անբավարարություն»
- Ցանկացած անձ, ով ընդունում է eculizumab կոչվող (նաև կոչվող Soliris®) դեղը
- Միկրոկենսաբանները, որոնք մշտապես աշխատում են մեկուսիչներով *N. Meningitidis*-ի
- Ցանկացած անձ, ով ճանապարհորդում կամ ապրում է աշխարհի այն հատվածում, որտեղ մենինգոկոկային հիվանդությունը տարածված է, ինչպես, օրինակ՝ Աֆրիկայի հատվածներում
- Հանրակացարաններում բնակվող քոլեջի առաջին կուրսեցիները
- ԱՄՆ ռազմական զինակոչիկները

2-ից մինչև 23 ամսական երեխաները և որոշակի բժշկական վիճակներ ունեցող մարդիկ, ովքեր համապատասխան պաշտպանության համար բազմակի դեղաչափերի կարիք ունեն: Հարցրեք ձեր առողջապահական խնամք ապահովողին դեղաչափերի քանակի և ժամանակի և խթանիչ դեղաչափերի անհրաժեշտության մասին:

MenACWY-ը նախընտրելի պատվաստանյութն է 2 ամսականից մինչև 55 տարեկան այս խմբերի մարդկանց համար, որոնք նախկինում ստացել են MenACWY կամ ակնկալում են ստանալ բազմակի դեղաչափեր:

MPSV4-ը խորհուրդ է տրվում 55 տարեկանից բարձր մեծահասակներին, որոնք ակնկալում են ստանալ միայն մեկ դեղաչափ (ճանապարհորդներ կամ համայնքային համաճարակների դեպքում):



3

Որոշ մարդիկ չպետք է ստանան այս պատվաստանյութը

Հայտնեք այն անձին, ով ձեզ պատվաստանյութ է ներարկում:

- **Եթե ունեք որևէ խիստ, կյանքին սպառնացող ալերգիաներ:**
Դուք չպետք է ստանաք այս պատվաստանյութը, եթե երբևէ ունեցել եք կյանքին սպառնացող ալերգիկ ռեակցիա՝ նախկին մենինգոկոկային ACWY պատվաստումից հետո, կամ ունեք խիստ ալերգիա այս պատվաստանյութի ցանկացած բաղադրիչ մասի նկատմամբ: Ձեր առողջապահական խնամք ապահովողը ձեզ կպատմի պատվաստանյութի պարունակության մասին:
- **Եթե դուք հղի եք կամ կերակրող մայր եք:**

Հղի կանանց կամ կերակրող մայրերի վրա պատվաստանյութի ազդեցության վերաբերյալ շատ տեղեկատվություն չկա: Այն կօգտագործվի հղիության ընթացքում, միայն հստակ անհրաժեշտության դեպքում:

Եթե ունեք թեթևակի հիվանդություն, ինչպես, օրինակ՝ մրսածությունը, դուք հավանաբար կարող եք այսօր ստանալ պատվաստումը: Եթե չափավոր կամ խիստ հիվանդ եք, դուք հավանաբար կարող եք այսօր ստանալ պատվաստումը: Ձեր բժիշկը կարող է ձեզ խորհուրդ տալ:

4

Պատվաստանյութի ազդեցության ռիսկերը

Պատվաստանյութից, ինչպես և ցանկացած այլ դեղորայքից, հնարավոր են կողմնակի ազդեցություններ: Սրանք սովորաբար մեղմ են և անցնում են ինքնուրույն, սակայն հնարավոր են նաև կողմնակի ազդեցություններ:

ACWY պատվաստանյութ ստացող մարդկանց մեծ մասը ունենում են **թեթևակի խնդիրներ** պատվաստումից հետո, ինչպես, օրինակ՝ կարմրածությունը կամ ցավը ներարկման հատվածում: Նման խնդիրներ առաջանալու դեպքում, դրանք սովորաբար տևում են 1-ից 2 օր: MenACWY-ից հետո դրանք առավել հաճախ են, քան MPSV4-ից հետո:

Պատվաստանյութ ստացող անձանց փոքր տոկոսն է ունենում թեթևակի ջերմություն:

Խնդիրները, որ կարող էին առաջանալ ցանկացած ներարկված պատվաստումից հետո.

- Մարդիկ երբեմն բուժօգործողությունից հետո, ներառյալ պատվաստումը, ուշաթափվում են: Մոտավորապես 15 րոպե նստած կամ պառկած մնալը կարող է օգնել կանխելու ուշաթափությունը և վայր ընկնելու հետևանքով առաջացած վնասվածքները: Հայտնեք ձեր բժշկին, եթե դուք ունեք թեթև գլխապտույտ կամ տետղության փոփոխություն կամ զնգոց ականջներում:
- Որոշ մարդիկ ունենում են սուր ցավ ուսի մեջ և ձեռքը շարժելու դժվարություն՝ ներարկման հատվածում: Սա շատ հազվադեպ է պատահում:
- Ցանկացած դեղամիջոց կարող է առաջացնել սուր ալերգիկ ռեակցիա: Նման ռեակցիաները պատվաստանյութից շատ հազվադեպ են՝ միլիոնավոր դեղաչափերից մոտավորապես 1-ի մոտ քիչ և կարող են առաջանալ պատվաստումից հետո մի քանի րոպեից մինչև մի քանի ժամվա ընթացքում:

Ինչպես ցանկացած դեղամիջոցից հետո, պատվաստանյութի պատճառած լուրջ վնասվածքի կամ մահվան շատ հեռավոր հավանականություն կա:

Պատվաստանյութերի անվտանգությունը միշտ վերահսկվում է: Լրացուցիչ տեղեկատվության համար այցելեք՝ www.cdc.gov/vaccinesafety/

DCH-0930A

AUTH: P. H. S., Act 42, Sect. 2126.

Translation provided by the Immunization Action Coalition

5

Ի՞նչ տեղի կունենա լուրջ ռեակցիայի առկայության դեպքում:

Ի՞նչ պետք է ես փնտրեմ:

- Փնտրեք ձեզ վերաբերող ցանկացած բան, ինչպես, օրինակ՝ խիստ ալերգիկ ռեակցիայի նշաններ, շատ բարձր ջերմություն կամ անսովոր վարքագիծ:

Խիստ ալերգիկ ռեակցիայի նշանները կարող են ներառել՝ ցան, դեմքի և կոկորդի այտուցվածություն, ծանր շնչառություն, արագ սրտխփոց, գլխապտույտ և թուլություն- Սովորաբար պատվաստումից հետո մի քանի րոպեից մինչև մի քանի ժամ անց:

Ի՞նչ պետք է ես անեմ:

- Եթե դուք կարծում եք, որ դա սուր ալերգիկ ռեակցիա է կամ այլ անհետաձգելի դեպք, որը չի կարող սպասել, զանգահարեք 9-1-1 կամ գնացեք մոտակա հիվանդանոց: Այլապես՝ զանգահարեք ձեր բժշկին:
- Այնուհետև ռեակցիայի մասին պետք է զեկուցել Vaccine Adverse Event Reporting System-ին (VAERS) (Պատվաստանյութերի անբարենպաստ ազդեցությունների հաշվետվությունների համակարգ): Ձեր բժիշկը կարող է գրանցել այս զեկույցը, կամ դա դուք կարող եք ինքնուրույն էլ անել VAERS վեբ կայքի միջոցով՝ www.vaers.hhs.gov, կամ զանգահարելով **1-800-822-7967** հեռախոսահամարով:

VAERS-ը բժշկական խորհրդատվություն չի տալիս:

6

Պատվաստանյութից ստացված վնասվածքի Փոխհատուցման Ազգային Ծրագիրը

National Vaccine Injury Compensation Program-ը (VICP) (Պատվաստանյութից ստացված վնասվածքի փոխհատուցման ազգային ծրագիր) դաշնային ծրագիր է, որը կոչված է փոխհատուցելու որոշակի պատվաստանյութերից տուժած մարդկանց:

Մարդիկ, ովքեր կարծում են, որ վնասվել են պատվաստանյութից, կարող են իրազեկվել ծրագրի մասին և բողոք ներկայացնելու մասին՝ զանգահարելով **1-800-338-2382** կամ այցելելով VICP կայք www.hrsa.gov/vaccinecompensation: Բողոք ներկայացնելու համար ժամանակային սահմանափակում կա:

7

Ինչպե՞ս կարող եմ ավելին իմանալ:

- Հարցրեք ձեր առողջապահական խնամք ապահովողին: Նա կարող է ձեզ տալ պատվաստանյութի փաթեթի ներդիրը կամ առաջարկել տեղեկատվության այլ աղբյուրներ:
- Չանգահարեք ձեր տեղական կամ նահանգային առողջապահական բաժանմունք:
- Կապվեք Centers for Disease Control and Prevention-ի (CDC) (Հիվանդության վերահսկման և կանխարգելման կենտրոնների) հետ.
- Չանգահարեք **1-800-232-4636** հեռախոսահամարով (1-800-CDC-INFO) կամ
- այցելեք CDC-ի կայք հետևյալ հասցեով՝ www.cdc.gov/vaccines

Vaccine Information Statement Meningococcal ACWY Vaccines

03/31/2016

Armenian



42 U.S.C. § 300aa-26

Բժշկական խնամք ապահովող(ներ)ին թույլատրելու համար պատվաստումների իրավիճակի վերաբերող ճշգրիտ տեղեկություն, պատվաստումների գնահատականներ եւ հետագա պատվաստումների առաջադրված գրաֆիկը, տեղեկությունները կուղարկվեն Michigan Care Improvement Registry (Միչիգանի խնամքի բարելավման գրանցման կենտրոն): Անհատներն իրավունք ունեն պահանջելու իրենց բժշկական խնամք ապահովողից, որպեսզի պատվաստումների տեղեկությունները գրանցման կենտրոն չուղարկվեն: